## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
ՀՀ Արարատի մարզ գ. Հովտաշատ 0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

**Ո Ր Ո Շ Ու Մ**

20 նոյեմբերի 2015 թվականի N- 30Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՕՐԱԿԱՐԳԸ

1. ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. 2016թ-ի ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ << ՇՈՒՇԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:
3. ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ << ՇՈՒՇԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատի համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 11-րդ հերթական նիստի օրակարգը:
Կողմ-9, Դեմ-0, Ձեռնպահ-0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման
2. Բադալյան Նամեստ
3. Գասպարյան Մկրտիչ
4. Դարբինյան Շալիկո
5. Եգորյան Գագիկ
6. Հարությունյան Համլետ
7. Հովհաննիսյան Գոռ
8. Հովհաննիսյան Հայկ
9. Մխիթարյան Քերոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք

ՀՀ Արարատի մարզ գ. Հովտաշատ 0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru


# ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2015 թվականի № 31-Ն

## ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18 կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով:

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնքում 2016 թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

***1.*** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետական շինարարական նախագծին համաձայն նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական / շինարարության տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**Հիմնական օբյեկտների համար՝**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000դր.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000դր

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35 000դր

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5 0 000դր

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2 500դր

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000դր

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-

ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ

4. **Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000դրամ

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 250 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000դրամ

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000դրամ

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղականտուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000դր

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ.

5[1]. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 300 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 700 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղականտուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 75 000դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

**Տեղական վճարներ**

1). Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարություն փաստագրելու համար , մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման համար վճար սահմանել 10 000դրամ

2). Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար, մատուցման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000դրամ

3). Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3 000դրամ

4).Համայնքի տարածքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1. կենցաղային աղբի համար մատուցված ծառայությունների դիմաց յուրաքանչյուր բնակչի համար ամսական 80 դրամ

2. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 3000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար 10 000 դրամ:

Կողմ-9, Դեմ-0, Ձեռնպահ-0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման
2. Բադալյան Նամեստ
3. Գասպարյան Մկրտիչ
4. Դարբինյան Շալիկո
5. Եգորյան Գագիկ
6. Հարությունյան Համլետ
7. Հովհաննիսյան Գոռ
8. Հովհաննիսյան Հայկ
9. Մխիթարյան Քերոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք

ՀՀ Արարատի մարզ գ. Հովտաշատ 0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2015 թվականի № 32 -Ն

2016թ-ի ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ << ՇՈՒՇԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական Ինքնակառավարման մասին>> Օրենքի 16-րդ հոդվածի 8 և 26 կետերի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել 2016 թվականի Հովտաշատ համայնքի ղեկավարի աշխատավարձը 250 000 դրամ
2. Համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը 12
3. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի

ՀԱՎԵԼՎԱԾ 1

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ |
|---|---|---|
| ***ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | *200 000* |
| ***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | *204 000* |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/,/3.1-2/ | 2 | *200 000* |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.2-1/,/3.2-2/ | 2 | *175 000* |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/ | 1 | *171 000* |
| ***ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ*** | | |
| Օպերատոր | 1 | 120 000 |
| Պահակ | 1 | 73 800 |
| Գործավար | 1 | *135 000* |
| *Հավաքարար* | 1 | *79 100* |

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ *(ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| Մշակույթի տան տնօրեն | 1 | 140000 |
| Մշակույթի տան հավաքարար | 1 | 73 800 |

| | | |
|---|---|---|
| *Քաղաքացիական աշխատանք* | | |
| Գրադարանավար | 1 | 80000 |

*ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Մանկապարտեզի տնօրեն | 1 | 159 000 |
| Մանկապարտեզի դաստիարակ | 4x1,25 | 126 600 |
| Դաստիարակի օգնական | 3x1,1 | 67 100 |
| Դաստիարակի օգնական | 1x1,1 | 72 000 |
| Մեթոդիստ | 0,5 | 158200 |
| Երաժիշտ | 1 | 85000 |
| Բուժքույր | 1 | 75000 |
| Հաշվապահ | 1 | 85000 |
| Տնտեսվար | 1 | 79 100 |
| Խոհարար | 1 | 80 000 |
| Խոհարարի օգնական | 1 | 79 100 |
| Պահակ | 1 | 73800 |

Կողմ-9, Դեմ-0, Ձեռնպահ-0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման
2. Բադալյան Նամեստ
3. Գասպարյան Մկրտիչ
4. Դարբինյան Շալիկո
5. Եգորյան Գագիկ
6. Հարությունյան Համլետ
7. Հովհաննիսյան Գոռ
8. Հովհաննիսյան Հայկ
9. Մխիթարյան Քերոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
ՀՀ Արարատի մարզ գ. Հովտաշատ 0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2015 թվականի № 33 –Ա

## ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ << ՇՈՒՇԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջեռուցման սեզոնի հետ կապված՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ս/թ-ի դեկտեմբերի 31-ից մինչև 2016 թ-ի ապրիլի 1-ը ժամանակավորապես դադարեցնել <<Շուշան>> մանկապարտեզի աշխատանքները:
2. Աշխատողների աշխատավարձը վճարել օրենքով սահմանված կարգով:

Կողմ-9, Դեմ-0, Ձեռնպահ-0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման
2. Բադալյան Նամեստ
3. Գասպարյան Մկրտիչ
4. Դարբինյան Շալիկո
5. Եգորյան Գագիկ
6. Հարությունյան Համլետ
7. Հովհաննիսյան Գոռ
8. Հովհաննիսյան Հայկ
9. Մխիթարյան Քերոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշատ համայնք
ՀՀ Արարատի մարզ գ. Հովտաշատ 0236- 6-22-36, 093-407-713 hhovtashat@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

20 նոյեմբերի 2015 թվականի № 34 –Ն

ՀՈՎՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հովտաշատ համայնքի 2015 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները:
**1.Վարչական բյուջե՝**
**Եկամտային մաս**
Այլ ոչ հարկային եկամուտների գումարից պակասեցնել 110.0 հազ. դրամ
Տեղական տուրք ծխախոտի վաճառքի թույլատվության համար գումարից պակասեցնել 5.0 հազ դրամ
Տեղական տուրք ոգելից խմիչք վաճառքի թույլատվության համար գումարին ավելացնել 10.0 հազ դրամ
Տեղական տուրք Հանրային սնդի և զվարճանքի օբեկտներիում ժամը 24-ից հետո աշխատելու թույլատվության համար գումարին ավելացնել 50.0 հազ դրամ
Տեղ տուրք հիմնական շինության ներսում հանրային սննդի կազմակերպման իրականացման համար գումարին ավելացնել 6.0 հազ դրամ
Տեղ. վճար մրցույթներ և աճուրդ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման գումարին ավելացնել 144.0 հազ. դրամ
Տեղ. վճար շին. ավարտը փաստագր. համար գումարին ավելացնել 20.0 հազ. դրամ
**Ծախսային մաս**
1-1-1 Օրենսդիր գործադիր մարմին ծախսային ծրագրերի
4232 հոդվածի գումարից պակասեցնել 75.0հազ.դրամ ,
4234 հոդվածի գումարից պակասեցնել 130.0հազ.դրամ ,
4261 հոդվածի գումարից պակասեցնել 100.0հազ.դրամ,
4269 հոդվածի գումարից պակասեցնել 120.0հազ.դրամ
8-2-3 Մշակույթ ծախսային ծրագրերի 4252 հոդվածի գումարից պակասեցնել 100.0 հազ.դրամ, 4269 հոդվածի գումարից պակասեցնել 100.0 հազ.դրամ
6-3-1 Ջրամատակարարում ծախսային ծրագրերի 4212 հոդվածի գումարից պակասեցնել 500.0 հազ.դրամ
8-2-4 Մշակութային ծառայություններ ծախսային ծրագրերի 4239 հոդվածի գումարից պակասեցնել 500.0 հազ.դրամ
9-2-1 Հիմնական ընդհանուր կրթություն ծախսային ծրագրերի 4729 հոդվածի գումարից պակասեցնել 200.0 հազ.դրամ
8-1-1 Հանգստի և սպորտի ծառայություն ծախսային ծրագրերի 4819 հոդվածի գումարից պակասեցնել 115.0 հազ.դրամ
1-6-1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություն ծախսային ծրագրերի 4235 հոդվածի գումարից պակասեցնել 321.0 հազ.դրամ
5-1-1 Աղբահանում ծախսային ծրագրերի 4213 հոդվածի գումարից պակասեցնել 110.0 հազ.դրամ

6-4-1 Փողոցների լուսավորում ծախսային ծրագրերի 4212 հոդվածի գումարին ավելացնել 800.0 հազ.դրամ

10-7-1 Սոց արտոնություններ /այլ դաս. չպատ/ ծախսային ծրագրերի 4729 հոդվածի գումարին ավելացնել 1686.0 հազ.դրամ

**2.Ֆոնդային բյուջե՝**

եկամտային մաս

Հողերի իրացման մուտքերի գումարին ավելացնել 43125.6 հազ դրամ

Գույքի օտարումից մուտքերի գումարին ավելացնել 214.7 հազ դրամ

**Ծախսային մաս՝**

8-1-1 Հանգստի և սպորտի ծառայություն ծախսային ծրագրերի 5112 հոդվածի գումարին ավելացնել 41607.0 հազ.դրամ, 5134 հոդվածի գումարին ավելացնել 1733.3 հազ.դրամ

Կողմ-9, Դեմ-0, Ձեռնպահ-0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալեքսանյան Արզուման
2. Բադալյան Նամեստ
3. Գասպարյան Մկրտիչ
4. Դարբինյան Շալիկո
5. Եգորյան Գագիկ
6. Հարությունյան Համլետ
7. Հովհաննիսյան Գոռ
8. Հովհաննիսյան Հայկ
9. Մխիթարյան Քերոբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ